ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____2022թ. **N____Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի բ) և դ) կետերը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ ____

/կազմված 09.12.2022. և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» _____ 2022թ.

N _____-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

15.02.2010թ.

Գրանցման համար՝ 271.210.03780

ՀՎՀՀ՝ 01224013

15.02.2010թ.-ին գրանցված

կանոնադրության

Թիվ ____ փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«____» _____ 2022թ.

աշխատակից՝

«ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/Փոփոխություն/

ԵՐԵՎԱՆ 2022

«Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության 2.1 և 2.2 կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1 Կազմակերպության գործունեության հիմնական առարկան մշակութային գործունեության, ոչ ֆորմալ կրթության, բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման իրականացումն է, իսկ նպատակը՝ բնակչության գեղագիտական դաստիրակությունն ապահովելը, կրթական համակարգի գործունեությանն օժանդակելը:

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) համակարգչային, լեզուների, կրթադաստիարակչական այլ ծրագրերի ուսուցման իրականացում,

բ) հասարակական սննդի կազմակերպում,

գ) ոչ աշխատանքային ժամերին և հանգստյան օրերին կրթամշակութային միջոցառումների իրականացում:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 15.02.2010թ. պետական ռեգիստրում գրանցված «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ ԳԿՀ) գործունեության արդյունավետության բարձրացման, մատուցվող ծառայությունների բազմազանեցման և, ըստ այդմ՝ ԳԿՀ-ի սեփական եկամուտները ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արդյունքում ավելացնելու հնարավորություն ընձեռելու անհրաժեշտությամբ:

ԳԿՀ-ն տարվա կտրվածքով իրականացնում է տարեկան շուրջ 200 մշակութային, կրթադաստիարակչական անվճար միջոցառումներ, սակայն ԳԿՀ թե վարչական, թե կազմակերպական ներուժը հնարավորություն է ընձեռում իրականացնել նաև կոմերցիոն բաղադրիչ ունեցող ծրագրեր և միջոցառումներ, որոնցից ստացված եկամուտը կարող է ուղղվել ԳԿՀ կանոնադրական նպատակների իրականացմանն ու ԳԿՀ աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմանը:

Այս նպատակով՝ ոչ աշխատանքային և հանգստյան օրերին կարող են կազմակերպվել կրթադաստիարակչական, մշակութային միջոցառումներ, հանդիպումներ, ԳԿՀ-ն կարող է իրականացնել կրթական ծրագրեր, կազմակերպել դպրոցահասակ երեխաների բովանդակալից ժամանցն ու գեղագիտական դաստիրակությանն ուղղված ծրագրերը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ